

ՎԱՐԴՈՎԱՐ



891.99.
U-50

19

ՎԱՐԴՈՎԱՐ

36

-6 NOV 2011

891.99
U-50 *new* ՎԱՐԴԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀՈՒՆՁԵԼ

ՊԱՏՄՎԱՐԺՎՆԵՐ

Ս Ս Խ Ե Լ Գ Ա Մ Ի
ԲԻՑԻԿ 1936

Հ Օ Ւ Ն Ձ Ե

Պայուղում տուն չկար, վորի համար աշխատած զիներ Սաշու նանք: Մի գեղեց—մի Սաշլու նան: Բուրդ լիներ գզելու, թե խոսք քաղհանանենելու կամ կարտոֆիլ հավաքելու, Սաշու վնասի կանչեցին: Բավական եր, վոր աշխատանքի կանչողը մի յերեխայի միջոցով ապապրեր:

— Նանի, մայրիկս ասեց, առավոտը քաղճանի գաս...

— Գամ, բալա ջան, գամ,—դեմքի կնճիռների միջով, մի ծույլ ժպիտ ցոլացնելով պատասխանում եր նաւ Դե կտրվի անտղամարդ ոջախի որբ:

Ել նրա աշխատելու վախտը չեր իսկի,
50 տարին գլորած կին, աչքի լույսն ել քիչ պա-
կասած, համա... ի՞նչ աներ... ապրել հարկավոր
եր, թե չե...

— Իմ զլուխը քարը, — մտամտում եր նա յերբեմն, ծանր թառանչ քաշելով, — ես յերկու յեթիմն են դարձու։ Քաշ դեմ գալ, քաշ դեմ գալ,



2732
40

Պատ. խմբագիր՝ Թ. Ազարյան
Նկարիչ՝ Սուլյաննով
Տեք. խմբագիր՝ Գ. Բարուցյան

մինչկը Արութս սաղ-սալամաթ գա, իրա ոջա-
խին տիրութին անի:

Արութը Աաշուկի մեծ վորդին եր:

Դեռ յերկու տարի առաջ Արութը պիտի վե-
րադարձած լիներ այն հեռու քաղաքից, ուր նա
գնացել եր սովորելու, բայց ուր եր...

Գյուղում համարյա ամենքը գիտեցին ու ի-
րար բերնե-բերան պատմում եյին, վոր Արութը
ընկերների հետ միասին ձմեռվա որերից մեկին
գնացել ա վորսի, գիշերը մնացել ա գուրսը, սա-
թալջամ ընկել (թոքերի բորբոքում) ու մի քանի
որից հետո մահացել:

Այդ մասին չգիտեր միայն ինքը՝ Սաշուն:

Հարեաններից ու բարեկամներից ել վոչ վոք
սիրտ չեր անում վշտացնել Սաշուն նանին:

Ու ամեն անգամ Արութի անունը պառավի
սրառում զարթեցնում եր յերջանիկ որերի գեղե-
ցիկ հեռանկարներ:

— Արութս գա, ես քոխիս քանդիլ դեմ, նոր
տուն շինիլ դեմ ու առջեր չափար քաշիլ դեմ, —
իրեն հուսադրում ու յերազում եր նա:

Բայց մինչև այս յերազի իրագործվելը,
նա թերը քշտած աշխատում եր սրա, նրա
մոտ, փայտով ծեծածի պես ջանը ցալ ըն-
կած յերեկոյան վերադառնում եր տուն ու դեռ
տուն ներս չմտած, նստում հողածածկ խրճիթի:

շեմքին, 10 տարեկան Շուշից ջուր պահան-
ջում խմելու ու ընկնում մտքերի խորքը, թե
վաղն ում խնդրի, վոր գան իրեն ովնեն դեղնած
հասկերը հնձելում ու տուն կըելում:

* *

Հուլիսյան շոգերն եյին:

Դաշտային աշխատանքների յեռուն շրջանը:
Յերեկը գյուղամիջում ուղածդդ մարդուն հազիկ
կարողանայիր տեսնել:

Գյուղի մեջ կենդանությունը պահպանում եր
միայն նոր յեկած պիոններական լագերը: Յերկու
հարյուրից ավելի յերեխաններ վխտում եյին ճա-
նապարհի կողքին ընկած դպրոցի ծառաշատ բա-
կում: Խմբերի բաժանված, վոմանք ջուր եյին
կրում գյուղի աղբյուրից, վոմանք իրենց ննջա-
րանն եյին կարգի գցում, վոմանք ել, իբր հեր-
թապահներ, անտեսական խնդիրներով ծանրա-
բեռնված՝ զես ու գեն եյին վազում: Իսկ ամե-
նից փոքրերը բակի մի անկյունում ստվերու
մի տեղ հերթական պարապմունքի եյին նստած:

Յերեկոյան մինաշաղից քիչ առաջ պիոնները
փողհարը սայթաքուն յերեխներով փողը զեց, և
բոլոր պիոններները հավաքվեցին յերեկոյան թե-
յի, ընթրիքի, ապա և քնի:

Այն որը լուսաղեմի լեռնային հովը շոյուամ
եր տնից յելնողի դեմքը: Մուգ-կապույտ յեր-
կնքում աստղերի վերջին մնացորդներն եյին մա-
րում մեկը մյուսի յետեկից: Գյուղի անդորրը
խանգարվում եր այս ու այն ծայրին կովերի ու
յեզների նոր սկսվող բառաչից, աքլարականչից,
ու ծուռումուռ փողոցներից լսվող սայլերի
ճոճոցից:

— Պատրաստ,—հրամայեց կոլվարը դպրոցի
բակում շարք-շարք կանգնած պիոներներին:

— Քայլել,—խրոխտ ձայնով հրամայեց նո-
րից նույն կոլվարը ու խումբը մեկնեց դեպի
բաց դաշտ:

Փափսուկով հանդիպեցին դեղին հասկերը նը-
րանց: Նըրանք մեղմ քամուց տարութերվելով,
ուռացած հատիկներով լի զլուխներն իջեցրին
մոտեցող խմբի առջև, կարծես, հնազանդ մնա-
լու խոսք ուղեցին ասել:

Ու յերեխանները մեկն դինվեցին մանգաղ-
ներով ու գերանդիներով:

Սկսվեց հնձի մի յեռուն աշխատանք: Հաս-
կերն ուշաթափ մարդկանց նման թուլանում,
պառկում եյին խումբ-խումբ ու ցրիվ տված
մանղ-մունք դեղեր կազմում:

Աշխատանքը համեմող յերգն ու ծիծառը բռո-
նել եր ամբողջ արտը:

— Վայ... տարան... Արտս տարան,—լու-
վեց հեռվից մի աղեկտուր ձայն:

Սաշլուն եր:

Կովար նորիկն անմիջապես վայր գցեց ձեռ-
քի գերանզին ու վազեց գեղի կինը:

— Վոչ վոք վոչինչ չի տարել, նանի, պիո-
ներներն ու տեղիս կոմյերիտներն են յեկել, վոր
ոգնեն, քեզ նման չքափորների արտը հնձեն,
Ամենից առաջ հենց քո արտն ենք հնձում:

Սաշլուն ապուշ եր կտրել: Նա բան չեր
կարողանում հասկանալ: Նա դիմեց նորիկին, վո-
րին լավ եր ճանաչում: Դրկիցի տղա յեր, իրեն
ձեռի տակ մեծացած:

— Ա՛, բալա ջան, բա եղ դուք խի՞ յեք ար-
տըս հնձում:

Նորիկը նորից բացատրեց:

— Բա յես վող վորդից ունեմ, վոր եղքա-
նիդ հախը տամ:

Նորիկը բացատրեց, վոր կոմյերիտներն աշ-
խատավարձ չեն վերցնում:

Սաշլուի աշքերը լայն-լայն բացվեցին և գըլ-
խի ընկափ, թէ բանն ինչումն եւ: Աննկատ մի
յերջանկություն հոսեց նրա յերակներով ու գու-
րեկան ժամփար կարծես հարթեց նրա դեմքի կըն-
ճիռները:

— Ապրեք, բալեք ջան, ապրեք, յերկար ուր
ունենաք, ոխնիլի ես սավետի կարգը, վոր եղքան
խելք ու շնորհք ա տվել ձեզ,—ու աշքերի մեջ
ինչ վոր բան շողին տվեց:

— Ձեր մուռնաթի տակին մնալ չեմ, բալեք
ջան: Արութս գա, տունս շինիլ դեմ, առջել մենձ
չափար քաշիլ դեմ ու մի բաղ դցիլ դեմ: Ձեզ
ամենքիդ կկանչեմ, բաղիս մեջն Արութիս հետ
քեֆ քաշեք: Համա, ձեզ մատադ, մի խնդիր ու-
նեմ: Շուշիկիս ել ձեզ տամ, թող ձեր արել
տակ նա ել խելք ու շնորհք սովորի:



* *

Կեսորից անցել եր:

Տաք արել խանձել եր բոլորի դեմքը:

Արտում մի քանի տեղ հոկա դեղ եր կիտ-
վել:

Հետևյալ որը պիոներների թիվը մեկով ա-
վելացավ: Շուշիկն եր այդ: Սաշուն եր ուղար-
կել նրան:

1928 թ.

ԹԵՎԸ

Յերկու որ եր Գուրգենը շատ անհանգիստ եր:
Նրա անհանգստության պատճառը յեղավ այն
փոքրիկ թղթի կտորը, վոր բերեց փոստատարը:
Գուրգենի համար ինչքան մեծ խնդրություն
կար այդ փոքրիկ թղթի կտոր՝ նամակի մեջ:
Շուտով գալու յեր հայրիկը...

Գիտե՞ք Գուրգենն ինչքան եր սիրում հայրի-
կին... Բայց ինչքան թույլ եր հիշում նրան,,..
իր հարազատ հայրիկին:

Ի՞նչ, գուք զարմանում եք, վոր Գուրգենը
լավ չի հիշում իր հորը:

Զարմանալու ըան չկա: Ի՞նչպես հիշե՞ս, քանի
փոր արդեն չորրորդ տարին եր նա հորը չեր տես-
նում և ինքը 5 տարին նոր եր լրացրել, վոր
հայրիկին տարան:

Սրդյոք, տարմն, թե գնաց. կամ յեթե տա-
րան, ուր տարան և ինչու տարան... .

Այս հարցերը յերկար, շատ յերկար են տան-
ջել փոքրիկ Գուրգենին: Ամեն անգամ այս հար-
ցերով նա դիմել ե մայրիկին ու ամեն անգամ

ել լսել նրա կցկտուք բացանըությունները, բայց
ամեն անգամ ել այդ հարցերը մնացել են մութ,
մնացել են անհամկանալի:

Դուրգենը մշուշապատ ե հիշում հայրիկի մեկ-
նելու որը:

Այդ որը մայրիկի աչքերին հաճախ եյին շող-
շողում արցունքի կաթիլները՝ մարդարտի պես
ջինջ ու անաղարտ:

Որը մոայլ եր, անընդհատ բարակ անձրև եր
մաղում:

Ասես յերկինքն ել մայրիկի պես լաց եր լի-
նում:

Վաղ առավոտից մայրիկը դասավորում եր
հայրիկի սպիտակեղենը նոր գնած կարմրավուն
փայտե մնդուկի մեջ ու շրջադրեստի ծայրով հա-
ճախ սրբում արցունքի կաթիլները:

— Այ, ես ել յերեսսրբիչներդ ու սապոնը.
տես, եստեղ եմ դնում,—դողդոջուն ու լացա-
կումած ձայնով ասաց մայրիկը, արդեն լցրած
մնդուկը յերկու ձեռքով վերնից տիտիելով:

Ահա և կայարաննը:

Դնացել են հայրիկին ճամբու զցելու:

Պառավ տատիկն եր տարել իրեն՝ թեկից բրո-
նած:

Մայրիկը ժամանակ չուներ իրենով զբար-
վելու:

Գուրգենը շատ լավ է հիշում, վոր այդ որն
ուրիշ շատ հայրիկներ ել եյին մեկնում։ Կայա-
րանում նա շատ ուրիշ մայրիկների ու յերեխա-
ների յել տեսավ, վորոնք նույնպես յեկել եյին
յուրայիններին ճամբու դնելու։

Գնացքը շարժվելու վրա յեր։

Կայարանում իրարանցում ընկավ։ Մեկնող-
ներն շտապում եյին վագոններում տեղ գրավել։


Գուրգենը հենց այժմ ել հիշում ե—հայրիկը
մոտ վագեց, սովորականի նման խտանց իրեն,
յերկու թևերով պինդ-պինդ սեղմեց կրծքին, զըր-
պանից մի քանի կանֆետ հանեց, տվեց իրեն,
կուշտ-կուշտ համբուրեց ու ցած դրեց։

Ինչքան ջերմություն զգաց Գուրգենը հայ-
րիկի գրկում։

Հայրիկը հետո մոտեցավ տատիկին ու մայ-
րիկին, յերկուսին ել համբուրեց ու շտապեց վա-
գոն։

Յերը գնացքը տեղահան յեղավ, տատիկն ա-
սես հորից լսվող ձայնով դիմեց հայրիկին։

— Լավ պահի քեզ, վորդի, աչքներս ջուր
չկտրցնես, են թղթի կտորը մի խնայի, շուտ-
շուտ նամակ գրի, —ու ասես մի սար փուլ յե-
կավ. արցունքը վողողեց նրա խորշումած դեմքը։
Իսկ մայրիկը... Մայրիկի ձայնը կարգել եր, ա-
սես մեկը կոկորդից բռնած խեղդում եր, նա հա-



դիվ «բարով գնաս, բարով գաս» շնչաց ու ար-
ցունքով լի աչքերը վագոնից ել չհեռացրեց։

Իսկ գնացքը դանդաղ սահում եր փայլուն
ոելսերով ու կամաց-կամաց չքանում հորիզո-
նում։

Դա այն գնացքներից եր, վորի ճամբան սուզ
ու շիվանով եր հարթվում ու վողողվում։

Համաշխարհային պատերազմի տարիներին եղաւ
այդ:

Գուրգենի հիշողությունից դեռ չի չնջվել
այն, վոր հայրիկի գնալուց հետո իրենց տունը
դարձավ կատարյալ մեռելատուն:

Մայրիկը հաճախ եր թըջում աչքերը, մանա-
վանդ յերբ նամակը քիչ ուշ եր գալիս:

Բայց անա այս վերջին նամակը կարծես յե-
կավ ու սրբեց մայրիկի աչքերի սովորական խո-
նավությունը:

Գուրգենանց տանը բոլորն ել սպասողական
դրության մեջ եյին: Ասես սեամաղ փիսիկն ել
վարակվել եր բոլորի սպասողական տրամադրու-
թյունից և գնում, նստում եր փողոցին նայող
պատուհանին և ժամերով անց ու դարձ անողին
նայում:

Ամեն լուսածեղին մայրիկը նոր թափով ու
յեռանդով հայրիկին դիմավորելու պատրաստու-
թյուն եր տեսնում, բայց որը մթնում եր ու
հայրիկն ելի դեռ չկար:

— Ինչու չի գրել թե վոր որն ե գալու, —
մանկական միամտությամբ հաճախ որտնեղութ
եր փոքրիկ Գուրգենը:

* *

Աշունը ուշ յեկավ ու շուտ ել տեղի տվեց
ձմբան որերին: Յերբ թափում եյին ձյան ծաղ-

կանկար առաջին փաթիլները, Գուրգենը մի պահ
հուսանատվեց, թե կարող ե հայրիկը այս չը-
գալ: Բայց յերբ նորից արեց բացվեց ու ձյունը
անեցացավ, յերկիրը շնչեց յերկրորդ աշնան ըն-
չով, Գուրգենը նորից զինվեց հույսով ու ելի
աչքը ճամբի պահեց:

Մի որ, յերբ նա դպրոցից տուն դարձավ,
դռան մոտ նա քարացած կանգնած մնաց:

Ահա և հայրիկը՝ զինվորի հագուստով:

Այդպես ել պատկերացրել եր նա հայրիկին:

Բայց մի տարորինակ բան շշմեցրել եր նը-
րան: Ինչու հայրիկի խալաթի աջ թեր խրած ե
գոտկի մեջ: Մինչ նա իր խելոք աշխիկները հա-
ռել եր հայրիկի ձախ թերին ու սուզվել մտած-
մունքների մեջ, հայրիկը նետվեց գեպի Գուր-
գենը և աջ թերով յերեխային պինդ գրեց ու
սկսեց կուշտ-կուշտ համբուրել:

Հայրիկը համբուրում եր ծարավ մարդու նը-
ման:

Գուրգենի հրճվանքին չափ ու սահման չը-
կար. բայց յերբ աչքը դեմ եր առնում հայրիկի
ձախ թերին, ասես մանկան միտքը խճճվում եր,
հոգին հուզվում եր, բայց հասկանալ չեր կարո-
ղանում, թե ինչու յեր հայրիկը մի թեր պահել:

— Ինչու կիմիկի, կեռնի հայրիկներն իրենց
թերերը գոտկի մեջ չեն պահում:



Գուրգենին անհաճզատացնում եր նաև այն,
վոր մայրիկի դեմքն այլես այն ուրախ արտա-
հայտությունը չուներ, ինչ արտահայտություն
ուներ մի քանի որ առաջ: — Միթե մայրիկն ու-
րախ չե, վոր հայրիկն յեկել ե, — մտածեց նա:

— Հանի, խաղաթդ հանի, արի գլուխդ լվա-
նամ, վոր հաց տամ ուտես, — դիմեց մայրիկը
հայրիկին՝ յերեսարքիչն ու սապոնը ձեռքին բլու-
նած:

— Յերբ հայրիկը խաղաթը հանելու համար
ոգնության կանչեց մայրիկին, փոքրիկ Գուրգե-
նը նոր միայն զլսի ընկալ, վոր հայրիկի մի թել
չկա:

Միթե հայրիկը մի թեանի յե յեղել: Վոչ,
այդ չի կարող լինել, վորովհետեւ Գուրգենը շատ
լավ ե հիշում, թե ինչպես իր հայրիկն իրեն յեր-
կու թեով խատում ու ման եր ածում:

Մի մութ կասկած բուն գրեց մանկան հո-
գում ու այլես հանգստություն չափեց:

Տիրոջ վոտերին փարփող փիսիկի նման Գուր-
գենը շարունակ պտույտ պտույտ եր անում նոր
շուրջը, բայց իր հետախույզ աշխիները նոր թե-
փեց բոլորովին չեր կարողանում հեռացնել:

— Հայրիկ ջան, ուր ե թեգ, — անսպասելի
հարց տվեց Գուրգենը, չկարողանալով այլես ի-
րեն գսպել:

2732
2 40



— Թես... թես, բալա ջան, թագավորը խը-
լեց, — հանկարծակիի յեկած վրա բերեց հայրիկը,
մտախոհ հայացքը մանկան վրա սկեռելով:

— Թագավորը խլեց, — ակամայից կրկնեց
մտքում յերեխան ու ընկավ մտածմունքների
մեջ: — Ինչքան վատ մարդ ե այդ թագավորը, —
անցավ նրա մտքով:

Թագավորի չար լինելու մասին Գուրգենն ու-
րիշ անդամ ել շատ եր լսել, բայց յերբեք նրա
չարությունն իրեն համար այնքան շոշափելի չեր
յեղել, ինչպես այժմ...

— Ո՞վ ե այդ թագավորը, — անսպասելի հարց
ավեց Գուրգենը:

Հայրիկը բացատրեց նրան, վոր թագավորն
իրեն համարում ե ամբողջ յերկը ու մարդկանց
տերը և վարդում ե նրանց հետ այնպես, ինչ-
պես տերն իր անսաստների հետ: Վոր ուրիշ
յերկըներում ել թագավորներ կան, վորոնք ի-
րենց յերկը ժողովրդի հետ վարդում են նույն-
պես, ինչպես մեր թագավորը: Հայրիկը պատմեց
նաև պատերազմների մասին, վոր սպատերազմից
թագավորներն ու հարուստները հարստանում են,
իսկ ժողովուրդները կորցնում են իրենց թերը,
վոտներն ու նույնիսկ կյանքը:

— Յես վոր մեծանամ, պիտի կտրեմ բոլոր
թագավորների թերը, — ասաց խրոխտ տոնով

Գուրգիկ Գուրգենը՝ դեպի թագավորները բռւռն
ատելությամբ համակված:

Հայրիկն ուրախությունից նորից համբուրեց
Գուրգենին, բայց առանց սովորականի նման
գրկելու:

Ը Ն Կ Ե Ր Ը

Փոքրիկ Արտիկը չափաղանց ընդունակ, բայց
ծույլ ու չարաձճի տղա յեր: Նա շատ եր սիրում
իր նման չարաձճի յերեխաներին իր շուրջը հա-
վաքել և սրա կամ նրա գլխին ոյիններ խաղալ:

Արտիկն արդեն չորրորդ դասարանումն եր,
բայց նա սիրում եր դպրոց գնալ վոչ այնքան
դաս պարապելու և բան սովորելու, վորքան խա-
գալու համար:

Դասարանում նա անուշադիր եր դեպի դա-
սերը: Փոխանակ ուսուցչի բացատրություննե-
րին հետևելու, նա կամ խաղում եր ինքն իրեն,
կամ վերցնում եր մի փոքրիկ մազի կտոր, քսում
եր առջե նստած աշակերտի վզակոթին ու նրան
անհանգստացնում, կամ թե չե խոսեցնում եր
իր հարևան յերեխային ու նրան ել զրկում դա-
սին հետևելու հնարավորությունից:

— Բնկեր Մարուքյան, Արտիկը խոսում ե,
թույլ չի տալիս դաս լսեմ, — գանգատվեց մի որ
ուսուցչին Արտիկի կողքին նստող Արմիկը, վորը

մի խելոք, գանգրահեր յերեխա յեր և դասարա-
նի հարվածային աշակերտներից մեկը:

— Ո՞վ... յե՞ս... — զարմանքի արտահայտու-
թյուն տալով իր գեմքին, վեր թուակ Արտիկը
տեղից ու իրեն չքմեղ ու բանից անտեղյակ
ձևացրեց:

— Սուտ և ասում, ընկեր Մարուքյան, յես
վոչինչ չեմ անում, — արդարացրեց իրեն Արտիկն
ու ելի շարունակեց իր չարաձճիությունները:

— Միթե պիոնները սուտ կխոսի, — տեղից
ձայնեց պիոններ Բենիկը սրտնեղած, — Արմիկը
պիոններ և և յերբեք սուտ չի խոսում:

Բենիկի միջամտությունը Արտիկին դուր չե-
կագ և ուսուցչից թաքուն, սեղանի տակից բը-
ռունցք ցույց տվեց նրան:

Դասարանի դաստիարակ - ուսուցիչ Մարու-
քյանը հաճախ նրան խրատում եր:

— Արտիկ, թող չարաձճիություններդ, սո-
վորիր, վոր մարդ դասնաս, ափսոս են ընդու-
նակություններդ, մեղք ես դու ել ու մայրդ ել:

Բայց Արտիկը շարունակում եր ելի իր խա-
ղերը:

Նա յերբեք տանը դաս չեր պատրաստում:
Դաս պատասխանելիս նրան շատ եր ոգնում իր
լավ հիշողությունը:

Միակ աշակերտը, վորից նա պատկառում եր

և սիրում, դա պիոներ Զարիկն եր, վորի խոսքը
Արտիկի համար կշիռ ու արժեք ուներ:

Զարիկը դասարանի նախագահն եր ու խելոք
յերեխաներից մեկը: Զարիկը Արտիկին այնքան
չեր սիրում, վորքան խղճում եր. նա գիտեր, վոր
Արտիկը հայր չունի, ընտանիքի աշխատող ձեռքը
միմիայն նրա մայրիկն ե, վորը ծառայում ե
սպասուհու պաշտոնով և իր փոքրիկ ոռճիկով
ընտանիքը պահում:

Զարիկը յերբեք վոչինչ չեր ուտում առանց
Արտիկի: Հաճախ նրան տանում եր իրենց տուն
և հյուրասիրում:

Թերեւս այս հանգամանքը ստիպում եր Ար-
տիկին զուսպ լինել Զարիկի նկատմամբ և նրան
յերբեք չվիրապորել:

Արտիկի ծուլությունը և դասերից յետ մնալը
գուցե նրա մորն այնքան չեր անհանգստացնում,
վորքան Զարիկին: Ինչքան նա աշխատում եր
խրատել, Արտիկին կարգի հրավիրել, այնուամե-
նայնիվ նա իր նպատակին չեր համում, վորով-
հետեւ դպրոցի մյուս չարաձնիները ելի հավաք-
վում եյին նրա շուրջը և քաշում իրենց կողմը:

Մոտենում եյին ձմեռային ստուգումների ո-
րերը: Աշակերտության շրջանում կյանքը յեռում

եր: Մրցման եյին կանչում գասարանը - գասա-
րանին, աշակերտը - աշակերտին՝ ստուգմանը լա-
վագույն ցուցանիշներ ձեռք բերելու համար:

— Յես մրցման եմ հրավիրում ընկ. Արտի-
կին, — հայտարարեց դասարանական ժողովներից
մեկում Զարիկը, նպատակ ունենալով գոնե այդ
միջոցով ազգել Արտիկի վրա և ստիպել նրան
դասելով հետաքրքրվել:

Դասարանի այս ու այն անկյունում յերե-
խաները փոթկացին: Նրանցից շատերին ծիծա-
ղելի թվաց Արտիկին մրցման հրավիրելը:

Արտիկը նկատեց այդ, զայրացավ, բայց և
կարմը:

Նրա ինքնասիրությունը վիրապորված եր:
Միթե ինքն այնքան անպետք է ճանաչված, վոր
բոլորը ծիծաղում են իր վրան:

Արտիկը ճայն խնդրեց, տեղից յելավ և լուրջ
գեմք ընդունած, հայտարարեց.

— Մրցման հրավերն ընդունում եմ և իմ
կողմից ել մրցման եմ հրավիրում Շամփարա-
թյան Արամին:

Ժողովից հեռանալիս, յերեխաներից վոմանք
ծաղրեցին Զարիկին.

— Ծույլերին ե մրցման կանչում, վորպես-
զի ինքը հաղթող գուրս գա...

* * *

Մի ամբողջ շաբաթ եր, մայրիկը դժվարա-
նում եր Արտիկին ճանաչել:

Դպրոցից գալուն պես, Արտիկը ճաշում և
անմիջապես դասերի յեր անցնում: Նա կամ ժա-
մերով զլուխը կախ եր գցում գրքերի վրա, կամ
գիրք ու տետրեր ձեռքն առած վազում եր այս
կամ այն ընկերոջ մոտ:

— Արտիկ ջան, եդ մւր, — ձայնում եր յե-
տիկց մայրիկը:

— Մայրիկ ջան, գնում եմ Բենոյի մոտ մա-
թեմատիկայի դասերը կրկնելու, վաղը ստուգումն
ունենք, — պատասխանում եր նաև մայրիկին ու
շտապ անից դուրս թռչում:


Ստուգումներն անցնում եյին Արտիկի համար
անսպասելի աջողությամբ, Յերեխաներից շա-
տերը զարմացել եյին, թե ինչպես ե ծույլ Ար-
տիկը այդքան աջող քննություններ տալիս:

Իսկ Զարիկը հրձվում եր ու պարծենում, վոր
աջողվել ե Արտիկին ուղղել և լավագույն աշտ-
կերաների շարքը դասել:

Արձակուրդների առաջին որերն եյին:

Դպրոցում հանդես եր:

Հանդիսավոր պայմաններում հայտարարեցին
ուսման հարվածայինների ազգանունները, ինչ-
պես և այն, թե ով ինչով ե պարզեատրվում:



Արտիկին նվիրեցին մի փառահեղ գիրք:
Յետ մասցող աշակերտները նախանձեցին նը-
ր ան:

Յնծության ժպիտը դեմքին Արտիկը յեկավ
տուն։ Զարիկն ել հետն եր։

Մայրիկը ձեռները հանեց լվացքի տաշտից,
մի չոր որով մաքրեց ու մոտեցավ Արտիկին։

— Բալեք ջան, բա քաղցած չեք, բան տամ
ուտեք։

— Չե, քաղցած չեմ, կուշտ եմ, — ՀՀՆՁաց
Արտիկը, խնդալից աչքերը մոր վրայից չհեռաց-
նելով։

— Բա ի՞նչ ես կերել վոր կշտացել ես։
— Այ, ես, — պատասխանեց Արտիկն ու
գիրքը մեկնեց մորը։

— Եդ ի՞նչ ե, բալա ջան։
— Գիրք։
— Ումն ե, քոնն ե։

— Չե, այ, սրանը, — ու մատնացուց արակ
Զարիկին. — առանց սրա ոգնության յես չեցի
կարող այս նվերն ստանալ։

— Չե, մայրիկ ջան, իրենն ե, լավ սովորե-
լու համար պարզե են տվել, — շտապ վրա բերեց
Զարիկը կարմրելով ու մի քիչ ել նեղացավ Ար-
տիկից, վոր մայրիկին շփոթության մեջ ե գցում
ու իրեն ել անհարմար դրության մեջ գնում։

Մայրիկի դեմքին ասես արև բացվեց, յերբ
լոեց իր վորդու առաջադիմության մասին։

— Ապրեք, շատ ապրեք, այ վորդեք, ապ-

րեք, վոր եղբան լավ ընկերներ եք, — ՀՀՆՁաց
մայրիկը հոգեկան մեծ հրճվանք զդալով։ — Լավ
ընկերը արևից ել դուրեկան, արևից ել հզոր ա:
լավ ընկերոջ հետ վոր չոր տափաստանն ել գը-
նաք, տափաստանն ել կծլի ու կծաղկի, — ասաց
մայրիկն ու յերկու ընկերոջ ճակատից ջերմ-
ջերմ համբուրեց։

Եյդ որը Արտիկի ամենայերջանիկ որերից
մեկն եր։

ՓՈՔՐԻԿ ՌՈՒԴՈԼՖԸ

Զգույշ...

Փոքրիկ Ռուդոլֆին չհարցնենք՝ «ուր ե հայրդ»։ Այդ հարցից հուզվում ե նա ամեն անդամ։ Նա անչափ սիրում ե իր հայրիկին, բայց... ափսոս, վոր հայրիկն իրենց մոտ չե... Նա դարձն վում ե հեռու, հեռու մի յերկրում, վորը Խորհրդային Միություն ե կոչվում։ Ախ, ինչքան կուզեր, վոր ինքն ել լիներ այստեղ, ուր հայրիկն ե... Գուցե շուտով, շատ շուտով իրենք ել մեկնեն այստեղ ապրելու—ինքն ու իր մայրը։ Գոնե հայրիկն իր բոլոր նամակներում խոստանում եր իրենց ել տանել։

— «Սիրելի Ռուդոլֆ, ինդքում եմ իմ մասին դու չմտածես, — զբում եր հայրն իր վերջին նամակում, — յես առողջ եմ, գործս լավ, պայմաններից զոհ եմ։ Աշխատում ե ապրում եմ մարդավարի։ Այստեղ իշխանությունը բանվորների ձեռքին ե և ամեն ինչ արվում ե բանվորների դրությունը բարելավելու համար։ Այստեղ յես յերբեք գործազուրկ չեմ մնա, ինչպես մեր

քաղաքումն եյի ամբողջ վեց ամիս շարունակ։ այն ժամանակ մենք սովոր կոտորվում եյինք և տան իրեղեններն եյինք ծախում՝ գոյություններս պահպանելու համար։ Խորհրդային յերկրում վաղուց ե վերացված գործազրկությունը։ Յես աշխատում եմ մի մեծ գործարանում ավագ մեխանիկի պաշտոնով։

Սիրելի Ռուդոլֆ, ուղարկում եմ փող և քեզ համար քաղցրավենիներ։ Շուտով կգամ և քեզ ու մայրիկիդ կբերեմ այստեղ։

Փոքրիկ Ռուդոլֆը խնամքով ծալեց հոր նամակը և գրեց ծոցի զրպանը։ Հոր մոտ գնալու և նոր աշխարհ տեսնելու հեռանկարները նրա աշխիները լցրին խնդության արցունքով։

Փոքրիկ Ռուդոլֆը արգեն մի ամբողջ տարի յեր, ինչ բաժանվել եր հորից։ Հոր կարուտը նա առնում եր միայն նամակներից։ Հոր վերջին նամակը, հակառակ իր մոր ցանկության, միշտ մոտն եր պահում։ Ամեն նոր նամակ գալիս եր փոխարինելու հին նամակին։

* * *

Եյն որը, յերբ 12 տարեկան Ռուդոլֆը դասարան մտավ, դասարանում, բացի փոքրիկ ու գանգրահեր կարլից, ել ուրիշ վոչ վոք չկար։

Կարլը նստած դասարանի անկյունում ծա-
մում եր իր փոքրիկ սև հացի կտորը ու դասը
սերտում:

Մինչև զանգը տալը դեռ շատ ժամանակ կար:

Ռուդոլֆը պայուսակը վայր դրեց, միջից
ինչ վոր թղթի մեջ խնամքով փաթաթված բան
հանեց, պայուսակը տեղափորեց իր նստարանում
ու մոռեցավ կարլին:

— Առ, կեր, — ասաց նա կարլին, պաքսի-
ժատի մի կտոր նրան մեկնելով:

— Վայ, վորաեղից, — հարցրեց փոքրիկ կարլն
ու ագահությամբ վրա ընկավ պաքսիժատին:

Կարլը յերբեք նրա ձեռքին այդպիսի անու-
շեղեն չեր տեսել:

— Խորհրդային Միությունից, հայրիկս ե
ինձ համար ուղարկել, — պատասխանեց Ռուդոլֆը
ու ինքն ել սկսեց անուշ անել պաքսիժատի մը-
նացորդը:

— Կարլ, դու դիտես, վոր շուտով յես այլու
դպրոց չեմ դալու, — շարունակեց Ռուդոլֆը:

— Ինչո՞ւ:

— Մենք մեկնելու յենք:

— Ո՞ւր:

— Խորհրդային Միություն: Այ, տես, ինչ ե
գրում հայրիկս, — այս ասելով նա ծոցից հանեց
մի թղթի կտոր ու տվեց կարլին, թեալետ հետո

Ռուդոլֆը փոշմանեց, վորովհետեւ մայրիկին խոսք
եր տվել հոր նամակներն ուրիշի ձեռքը չտալ:
Բայց չե վոր կարլն իր ամենահավատարիմ ըն-
կերն եր:

Կարլն աչքերը լարած կարդաց նամակն ու
վերադարձրեց Ռուդոլֆին, ներքին ինչ վոր ան-
հանգստություն զգալով:

— Յերանի իմ հայրիկն ել մեղ տանի այն-
տեղ, — մտմտաց նա:

— Այսոր հայրիկս նույնիսկ հացի փող չուներ:

Դասարանն արդեն լցվել եր աղմուկով: Յե-
րեխաներն արդեն հավաքվել եյին: «Լիլիպուտ»
Հենրիին սկսել եր իր սովորական ծամածու-
թյունները և թույլ չեր տալիս շատերին՝ սեր-
տելու դասը:

Զանգը հնչեց:

Բոլոր յերեխաները զրավեցին իրենց տեղե-
րը, բացի Հենրիիսից, վորը զրատախտակի մոտ
կանգնած, դեռ շարունակում եր իր հանաքները:

Ներս մտավ աշխարհագրության ուսուցիչը:
Դասարանում դադարեց աղմուկը: «Լիլիպուտ»
Հենրիին անգամ իսկույն նստեց իր տեղը, վո-
րովհետեւ աշխարհագրության ուսուցիչն այն ու-
սուցիչներիցն եր, վորից նա քաշվում ու պատ-
կառում եր:

Նախ քան պարապմունքին անցնելը, աշա-

կերտներից մեկը հաղիվ լսելի ձայնով ինչ վոր մտմտաց. բոլոր յերեխաները վոտքի յելած ունելոնդրեցին նրան, աջ ձեռքի շարժումներով յերեմներին ինչ վոր խաչի նշան քաշեցին ու նըստեցին իրենց տեղերը:

— Այժմ յես ձեզ կծանոթացնեմ Խորհրդային Միության հետ, հայտարարեց բարձրահասակ, նիհար գեմքով, շեկ մազերով ուսուցիչը, ակնոցները քթին հարմարեցնելով:

Փոքրիկ Ռուդոլֆն ու կարլը սրեցին իրենց ուշադրությունը: Նրանց աշխիները հետաքրքրությունից լարվեցին. Դասարանում տիրեց լոււժյուն:

— Հեղափոխությունից առաջ Ռուսաստանը կառավարում եր Նիկոլայ 2-րդ ցարը: Այն ժամանակ այնտեղ լիություն կար, կարգ ու կանոն, յեկեղեցի կար, մասնավոր առևտուր կար, իսկ 1917 թվից հետո, յերբ բոլոնիկ բանդիտներն առաջ բերին Հոկտեմբերյան հեղափոխությունը, յերկիրն անվանեցին Խորհրդային Միություն, վորն ընկապ ծայրահեղ չքափորության ու սովոր գիրկը...

— Քաղցած եմ, — շնչաց Ռուդոլֆի յետեկց՝ յերեխաներից մեկը:

Շնորջը նստածները մի պահ հայացքները նրա կողման ուղղեցին:

— Լոռւթյուն, — գոռաց նիհար ու բարձրահասակ ուսուցիչն ու շարունակեց իր պատմությունը:

... Յերկրում խախտվեց կարգ ու կանոնը և այժմ այնական մարդիկ ուսումն են միմյանց, սովոր բանվորները հարձակվում են գյուղերի վրա, գյուղերը՝ քաղաքի վրա, վորպեսդի կշտանան:

Ռուդոլֆի ու կարլի ապուշ կտրած հայացքները մի պահ իրար գեմ առան:

— Միթե այն բոլորը, ինչ վոր գրում ե հայրիկը, սուտ ե, — մտածեց գույնը գցած Ռուդոլֆը. — միթե հայրիկը խարում ե իրենց: Վճչ, վճչ, այդ չի կարող պատահել... Հայրիկը սուտ խոսել չի կարող. ինչո՞ւ պիտի հայրիկը խաբի իրենց: Յեթե խաբում ե՝ հապա գրամները, վոր նա ուղարկում ե կանոնավոր ամեն ամիս Խորհրդային Միությունից, ապա պաքսիմատը: Զե վոր ինքն իր ձեռքով շոշափեց այդ պաքսիմատը ե, վերջապես, ինքը կերավ... Զե՝ վոր կարին ել շոշափեց ու կերավ այդ պաքսիմատից: Միթե այդ բոլորը սուտ ու խաբուսիկ ե յեղել, — մտածում եր Ռուդոլֆը և այլս չեր կարողանում հետևել ուսուցչի պատմածներին:

— Բայց ինչո՞ւ ուսուցիչը, վորին այնքան սիրում են ու հավատում, բոլորովին հակառակն ե պատմում... Մեկը, կամ մյուսը: Կամ հայրիկն

Ե սուտ ասում, կամ ուսուցիչը: Մուդոլֆը շատ
լավ եր ճանաչում իր հորը, նա յերբեք, յերբեք
սուտ չի խոսել—ահա ապացույց պաքսիմատն ու
փողերը... Ուրեմն ստում ե ուսուցիչը: Ինչպես,
ինչ իրավունքով... Ապա ել ինչու յեն նրան
հավատում...

Փոքրիկ ուղեղում խոնված մտքերը ստու-
դելու նպատակով կարծես, ձեռքը մեկնվեց դե-
պի ծոցը, վորպեսզի հանի նամակը, նորից կար-
դա, նորից ստուգի:

Նրա ճրագ կտրած աչիկները արագ սահեցին
նամակի վրայով և ուսուցչի ստախոսությունը
մերկացնելու, մի անզուսալ ցանկությամբ բռնվեց
նա:

— Սուտ ե,—ակամայից դուրս թռավ հուգ-
ված ու այլայլված մուդոլֆի բերանից:

Բոլոր յերեխաները շփոթված հայացքներն
ուղեցին դեպի մուդոլֆը:

+ Ի՞նչն ե սուտ, այդ ով համարձակվեց,—
դայրացավ նիհար գեմքով ուսուցիչը, ուղղելով
իր քթին թամբի պես նստած ակնոցը:

— Պարօն ուսուցիչ, այդ յես եյի ասողը, ա-
ռեք, կարգացեք այս նամակը և դուք ել կհա-
մոզվեք, վոր սխալ եք: Հայրիկս յերբեք
սուտ չի խոսում,—կտավի գույն ստացած, բայց
համարձակ խոսեց մուդոլֆը:



Նամակն անմիջապես ընկավ նիհար ուսուցչի
ձեռքը և առանց կարդացվելու կտոր-կտոր յեղավ:
Ռուգոլֆի աչքերին արցունքի կաթիլներ յե-
րեացին...

— Յես ընդհատում եմ դասը, այլևս չեմ
շաբունակի, մինչև այդ անպետքը դասարանից
դուքս չկորչի, — հայտարարեց զայրացած ուսու-
ցիչը ու դասարանից դուրս յելավ:

Աշակերտները դասարանում իրար յերեսի
նայեցին ու կատարվածից բան չհասկացան:

Հուզված Ռուգոլֆն ստիպված յեղավ դրքերը
հափաքել ու տուն գնալ:

Հետեյալ որը Ռուգոլֆենց տաճը վոստիկան-
ըներ յերեացին: Տունը խուզարկելուց հետո, ոը
անց առաջարկվեց 24 ժամվա ընթացքում հե-
ռանալ մի հեռավոր վայր:

Յերբ մայրը արցունքն աչքերին իրեղեններն
եր կապկապում, վորպեսզի տեղափոխվեն, այդ
նույն ժամանակ Ռուգոլֆը գլուխը սեղանին կախ
դցած նամակ եր գրում հայրիկին և թախան-
ձագին խնդրում նրան շուտով ազատել իրենց
մայրիկի ասած՝ այն «դժոխքից», վորի մեջ գտըն-
դում ելին իրենք:

ՓՈՔՐԻԿ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

ՓՈՔՐԻԿ, բայց թմբլիկ ու խելահաս աղջիկ
եր եմման: Շատ անզամ նա այնպիսի դիտողու-
թյուններ եր անում, վոր մայրը մոռանում եր,
թե իր հետ խոսողը 6 տարեկան փոքրիկ յերե-
խա յե:

Նա սիրելի յեր վոչ միայն իրենց տանը, այլև
ընկեր-ընկերուհիների համար: Նա առանձնապես
սիրելի յեր իրենց բակում ապրող փոքրիկ թի-
նիկոյի համար, վորը եմմիկի անբաժան ու մտե-
րիմ ընկերուհին եր: Թինիկոյի կապն եմմիկի
հետ ավելի ուժեղացավ այն ժամանակ, յերբ տե-
ղի ունեցավ մի դեպք, վորը յերբեք չեր մոռաց-
վում:

Պատահեց այնպես, վոր Թինիկոն անսպասե-
լի հիվանդացավ: Նրա մայրը, կար անող Քրիս-
տինեն, այդ ժամանակ աշխատում եր «Մկերա-
վի» գործարանում: Թինիկոյի համար սովորա-
կան բան եր ցերեկը տանը մենակ մնալ, մինչև
մայրիկի գործարանից վերադառնալը:

Այն որը, յերբ եմման սովորականի պես

բարձրացավ Թինիկոյենց տուն, նկատեց, վոլք
Թինիկոյի գեմքը կըսկի պես վառվում եւ:

— Դու հիվանդ ես, Թինիկո, — հարց ավեց
Նրան Եմման:

— Այո, — հազիվ պատասխանեց Թինան. Նրա
աչքերն ավելի վառվեցին Եմմային տեսնելուց
հետո:

— Դու պետք եւ պառկես, չի կարելի վոտքի
վրա մնար Սպասիր, յես քեզ համար անկողին
բացեմ:

Թիչ անց, տան աջ անկյունում թախտի վրա
արդեն անկողինը պատրաստ եր և Թինիկոն մեծ
պառկած:

Թինիկոյի բերանն ու լեզուն տաքությունից
չորանում եր, ու նա ջուր խնդրեց:

Եմման մայրիկից լսել եր, վոր հիվանդին
հում ջուր չեն տա, ու նա խուսափեց ջուրը
տալուց:

Յերբ Թինիկոն անկողնում աեղավորվելուց
հետո, աչքերն սկսեց փակել ու կամաց-կամաց
քուն մտնել, փոքրիկ Եմմիկը շարունակ մտա-
ծում եր, թե ելի ինչով կարող եւ ոգնել իր Թի-
նիկոյին:

Լույսի ճառագայթի պես մի ինչ-վոր բան
լուսավորեց նրա միտքը և նա առանց դանդա-
ղելու դուրս յեկալ սենյակից ու վազեց նույն

փողոցում ապրող բժշկի մոտ: Զանցավ 15 ըռ-
պե, բժիշկն արդեն քննում եր Թինիկոյին, իսկ
փոքրիկ Եմմիկը՝ մոր նման՝ հիվանդի մոտ կանգ-
նած կատարում եր բժշկի պատվերները:

— Վոչինչ չկա, քիչ մըսել ե, — ասաց բժիշ-
կը և հեռացավ, դեղատոմսը թողնելով սեղանի
վրա:

Յերբ յերեկոյան Թինիկոյի մայրը վերադար-
ձավ գործարանից անուն ու լսեց ամբողջ անց ու-
ղարձը, ել չիմացավ ինչով յերախտահատուցյ լի-
նի և ինչով պարզեատրի Եմմիկին իր խելացի
վարմունքի համար: Քրիստինեն նրան պարզեա-
տրեց մի ջերմ համբուլյով ու առաջարկեց շտա-
պել տուն, վորպեսզի մայրը չանհանգստանա:

Անցավ վորոշ ժամանակ:

Ամառվա տաք որերո վերջանալու վրա ելին,
յերբ թե Եմման և թե Թինիկոն մանկապարտե-
զից անցան գլորոց: Նրանք յերկուսն ել տեղա-
փորկեցին տարբեր գլորոցներում, բայց նրանց
մտերմությունը յերբեք չխախտվեց: Դասերից ու
պիոներ կոլեկտիվի աշխատանքներից հետո ա-
զատ ըուպեները նրանք դարձյալ միասին՝ ելին
անցկացնում:

Փոքրիկ Եմմիկն ընդունակություններ ցու-
ցարեց վոչ միայն դասերի մեջ, այլև պիոներ
կոլեկտիվի կազմակերպչական աշխատանքներում:

— Պինսերը պիտի լինի չափազանց կարգապահ ու աշխատասեր, — հաճախ նա խրատում եր իր ընկերներին ու թինիկոյին:

Ու մի որ աշխատասեր ու կարգապահ Եմային ընկերներն ընտրեցին ողակավար:

Մի որ ել պատահեց այնպես, վոր Եմման իրեն քիչ վատ զգաց: Այդ որը դպրոցական հանգըստի որ եր, բայց կոլեկտիվում հավաքույթի կար և ողակավարները պիտի հանդես գային հաշվետվությամբ իրենց աշխատանքների մասին:

Եմմայի մայրը նույնպես տանը չեր, նա յել նոր եր ծառայության մտել խորհրդային հիմնարկություններից մեկում:

Եմման մի քիչ գժվարությամբ անկողնից յեւավ և թեյ պատրաստեց իրեն համար, վոր խմի և գնա կոլեկտիվի պարապմունքին:

Թինիկոն, վոր հենց նոր եր ներս վազել, իրեն շատ անհանգիստ զգաց, յերբ լսեց Եմմայի վատառողջության մասին: Յերբ Եմման զբաղված եր կերասինկայի վրայից թեյամանը բարձրացնելով, թինիկոն սենյակից դուրս թռավ:

Եմմային շատ տարորինակ թվաց նրա անսպասելի սենյակից դուրս թռչելու: Նրան թվաց, թե Թինան բան եր մոռացել հետը վերցնելու, գնաց վերցնի, վոր շուտով նորից յետ դառնա:

Բայց Եմմայի սպասելն ապարդյուն եր:



Կոլեկտիվ գնալու ժամն արդեն մոտ եր: Եմման դուռը ինամքով փակեց ու գնաց:

Քիչ անց, նույն բժիշկը, թինիկոյի հետ միան կանգնած եր Եմմայենց տան դռան մոտ և

թակում եր դուռը: Բայց բաց անող չկար: Փոք-
րիկ Թինիկոն շատ ամաչեց բժշկից, վոր նրան:
բերել ու փակ դռան առջև եր կանգնեցրել:

— Վոչինչ, վոչինչ, սիրելիս, — ասաց բարի
բժիշկը, շոյելով նրա շեկիկ գլուխը, — յերեխ ու-
խալվել ես—ու հեռացավ առանց դժոհելու:

Ճաշից հետո, յերբ Եմմիկն ու Թինիկոն ի-
րար հանդիպեցին, նըանք յերկար-յերկար իրար
դգվեցին: Եմման խոստացավ իր գունավոր մա-
տիտները նվիրել նրան:

Կ Ո Ս Տ Ի Ն

Փանզը հնչեց:

Դաստիաններից դուքս հոսեցին մանուկներն
ու ցրվեցին փողոցների ուղղությամբ: Սալահա-
տակ մայթի վրայով, պատերի յերկարությամբ
ձգված ստվերներում, արեի խանձող ճառագայթ-
ներից պաշտպանվելով՝ գնում եր կոստին:

Ինչքան նոր-նոր բաներ ասաց ընկ. Հովհան-
նեսը հնդամյա պլանի, ավարտական տարփա-
արտիքինպլանների, հարվածայնության, սոցմըց-
ման և վերջապես սոցիալիզմի մասին:

Մի անգամ կոստին դիմել եր հայրիկին՝

— Հայրեկ, ի՞նչ ե հնդամյակը... .

— Ե, բալա ջան, դե, յես վոնց ասեմ, վոր
դու հասկանաս, — մի տեսակ խուսափողական-
պատասխան տվեց հայրը, — հնդամյակը հինգ տա-
րի յե, ելի, հինգ տարի սկիտի կառուցենք ..

Իսկ այսոր...

Այսոր կոստին ամեն ինչ գիտե մանրամասն,
գիտե այնքան, վոր կարող ե նույնիսկ հայրիկին,
մայրիկին և փոքրիկ Լիլիկին ել բացատրել ու

հասկացնել, թե ինչու պետք ե բոլորն անխտիր
աշխատեն հարվածայնորեն, վորպեսզի ավարտա-
կան տարվա պլաններն իրագործվեն:

Գնում եր Կոստին աղմկուն փողոցով, առանց
մարդկանց նկատելու:

Կոստին թեքվեց վերջին փողոցը, մտավ ի-
րենց մի հարկանի տան բակը:

* *

Կոստին մայր Աննան, վոր տան աման-չա-
մանը լվանալը վերջացնելու. վրա յեր, բոլորովին
մոռացել եր, վոր Կոստին տուն վերադառնալու
ժամանակն ե ու նրա համար պիտի ուտելու մի
քիչ բան պատրաստի:

Յերբ Կոստին ներս մտավ սենյակ, մայրը
ձեռքից բաց թողեց ամեն ինչ. բայց մայրիկին
տարորինակ թվաց այն, վոր Կոստին՝ փոխանակ
ուտելու բան պահանջելու՝ սուս ու փուս անցավ
իր անկյունը և սկսեց դասեր պատրաստել:

— Բալա ջան, բա զու ուտել չես ուղղում. —
անհանգիստ հարց տվեց մայրը:

— Դեռ չե, պետք ե հարվածային կերպով
աշխատենք. դեռ դասերս պատրաստեմ, հետո
կուտեմ, — մտմտաց փոքրիկ Կոստին:

Ինչքան տարորինակ, նույնքան և հաճելի
թվաց մորը վորդու այդ հայտարարությունը:

— Ինչու պիտի հարվածային կերպով աշխա-
տենք, բալա ջան:

— Վորպեսզի շուտ իրականացնենք հնգա-
մյակը, շուտ կառուցենք սոցիալիզմը:

Ճիշտն ասած՝ մայրը դժվարանում եր հավա-
տալ, թե Կոստին կարող ե պարզ գաղափար
կազմած լինել հնգամյակի մասին: Ինքը, վոր
հասակով կին եր, մի քանի անգամ խոսքը տեղն
ընկած վախտը սրան-նրան հարց ու փորձ եր
արել դրա մասին ու ելի չեր կարողացել հիմքից
իմանալ, թե բանն ինչումն ե: Մի որ ել այդ
նույն հարցով նա դիմել եր իր տմուսնուն՝ կարէ
գործարանի զալրոյշչիկ Ստեփանին, վորը գոր-
ծարանի հազվագյուտ պասսիվ բանվորներից մե-
կըն եր.

— Այ մարդ, մի ինձ հասկացրու, եղ հնգա-
մյակն ինչ բան ա յե...

* *

Կոստին դանդաղ ու մտախոն անուշ եր ա-
նում յուղում տապակած գետնախնձորն ու աչ-
քը մերթ ընդ մերթ ուղղում դեպի մայրը, վորը
յեկել, մոտը նստել եր:

Կոստին աչքերում պարձառ լույսեր ցոլացին,
սիրան անհանգիստ թոփքներ տվեց, յերբ նա

հասկացնել, թե ինչու պետք ե բոլորն անխափիր
աշխատեն հարվածայնորեն, վորպեսզի ավարտա-
կան տարվա պլաններն իրագործվեն:

Գնում եր Կոստին աղմկուն փողոցով, առանց
մարդկանց նկատելու:

Կոստին թեքվեց վերջին փողոցը, մտավ ի-
րենց մի հարկանի տան բակը:

* *

Կոստին մայր Աննան, վոր տան աման-չա-
մանը լվանալը վերջացնելու. վրա յեր, բոլորովին
մոռացել եր, վոր Կոստին տուն վերադառնալու
ժամանակն ե ու նրա համար պիտի ուտելու մի
քիչ բան պատրաստի:

Յերբ Կոստին ներս մտավ սենյակ, մայրը
ձեռքից բաց թողեց ամեն ինչ. բայց մայրիկին
տարորինակ թվաց այն, վոր Կոստին՝ փոխանակ
ուտելու բան պահանջելու՝ սուս ու փուս անցավ
իր անկյունը և սկսեց դասեր պատրաստել:

— Բալա ջան, բա դու ուտել չես ուղում. —
անհանգիստ հարց տվեց մայրը:

— Դեռ չե, պետք ե հարվածային կերպով
աշխատենք, դեռ դասերս պատրաստեմ, հետո
կուտեմ, — մտմտաց փոքրիկ Կոստին:

Ինչքան տարորինակ, նույնքան և հաճելի
թվաց մորը վորդու այդ հայտարարությունը:

— Ինչու պիտի հարվածային կերպով աշխա-
տենք, բալա ջան:

— Վորպեսզի շուտ իրականացնենք հնդա-
մյակը, շուտ կառուցենք սոցիալիզմը:

Ճիշտն ասած՝ մայրը դժվարանում եր հավա-
տալ, թե Կոստին կարող ե պարզ գաղափար
կազմած լինել հնդամյակի մասին: Ինքը, վոր
հասակով կին եր, մի քանի անգամ խոսքը տեղն
ընկած վախտը սրան-նըան հարց ու փորձ եր
արել զբա մասին ու ելի չեր կարողացել հիմքից
իմանալ, թե բանն ինչումն ե: Մի որ ել այդ
նույն հարցով նա դիմել եր իր ամուսնուն՝ կարէ
գործարանի զակրոյշչիկ Ստեփանին, վորը գոր-
ծարանի հազվագյուտ պասսիվ բանվորներից մե-
կըն եր.

— Այ մարդ, մի ինձ հասկացրու, եղ հնդա-
մյակն ինչ բան ա յե...

* *

Կոստին դանդաղ ու մտախոն անուշ եր ա-
նում յուղում տապակած գետնախնձորն ու աչ-
քը մերթ ընդ մերթ ուղղում դեպի մայրը, վորը
յեկել, մոտը նստել եր:

Կոստին աչքերում պարձառ լույսեր ցոլացին,
սիրոն անհանգիստ թոփքներ տվեց, յերբ նա



Հիշեց դպրոցի չորսամյակի ընդհանուր հավաքույթը:

— Մամա, դու զի՞տես, վոր յես հարվածային եմ, — ասաց նա խնդնավստահ ու համարձակ տոնով, — յես խոսք եմ տվել դասերս լավ սովորել, վորպեսզի խելոք լինեմ ու բանվորներին շռտ հասնեմ ոգնության:

* * *

Հետեւալ որը կոստիյենց խմբակը դպրոցում մեծ պատրաստության մեջ եր:

Խմբակը գնում եր կարի գործարանը դիտելու և կապ հաստատելու:

Կոստիի ուրախությանը չափ ու սահման չկար: Նա վաղուց յերագել եր այդ: Նա մի քանի անգամ խնդրել եր հորը՝ իրեն ել տանել գործարան, բայց հայրն ամեն անգամ վորևէ պատճառաբանությամբ հետաձգել եր:

Յերբ գործարանի փայտե հսկայական դուռը բացվեց՝ յերեխաները բոլորն ել տարված հետաքրքրությամբ ներս թափվեցին բակը՝ մեկը մյուսի առաջը կարելով, մեկը մյուսին հրելով: Շարքերը ցըմեցին բակում:

Ամենից ավելի ուրախ եր կոստին, վորովհետեւ նա պիտի վոչ միայն գործարանը տեսներ, այլև իր հորը, վորը տարիներ ի վեր այդ գործարանումն եր աշխատում:

Ընդպարձակ բակի այս ու այն կողմը թափված ու կիտված եյին հետզհետե ընդարձակվող գործարանի շինարարական նյութերը:

Բակի խորքի աջ անկյունում գտնվում եր գործարանի կարմիր անկյունը, իսկ նրա դռան ձախ կողմը կախված եր դասարանական գրա-

տախտակը հիշեցնող մի մեծ տախտակ՝ կարմիր
ու սև բաժիններով:

Յերեխանները ցրվեցին աջ ու ձախ: Մի խումբ
անցավ գեղի տախտակը, յերեխանները նայեցին
նրա վրա զրված ազգանունները մեկիկ-մեկիկ
ու անցան այլ բաժիններ:

Կարի մեքենաների դղրդյունով տարված՝ կոս-
տին նույնպես աննկատելիորեն մոռեցավ տախ-
տակին: Յերբ նա զլուխը բարձրացրեց սև տախ-
տակի ուղղությամբ ու կարդաց տասից ավելի
ազգանունները, նրա մարմնով ինչ վոր սառնու-
թյուն անցավ... կոստին գույնը գցեց, բայց
ձախ, ծպտուն չհանեց: Տարակուսեց, թե ինչու
այդ ազգանունն այդքան տհաճելի յե սև տախ-
տակի վրա և ինչքան հաճելի պիտի լիներ կար-
միր տախտակի վրա:

Կոստին այս վոշինչ չհետաքրքրեց:

Քիչ անց, մանուկների խումբն արդեն կուրու-
յեկավ գործարանի բակից ու յերեխանները՝ փոք-
րիկ խմբերի բաժանված՝ ցրվեցին գեղի իրենց
աները:

Յերբ յերեկոյան կոստիի հայրը՝ Ստեփանը՝
գործից տուն դարձավ, կոստին սովորականի նը-
ման ընդառաջ չվագեց, ու չփաթթվեց:

— Հայրիկ, — ձայնեց նա առանձին խորհրդա-
վորությամբ ու առանց հորը նայելու
— Ինչ ե, բալիկս, — վրա բերեց հայրը:
— Միթե գու չես ուղում, վոր սոցիալիզմը
կառուցվի:



Ստեփանը հանկարծակիկ յեկած՝ մնաց շշմած,
վորդու հարցից բան չհասկացավ:

— Ի՞նչպես թե չեմ ուղում սոցիալիզմ կա-
ռուցվի:

— Այն, այն, գու չես ուղում:

— Ինչից գիտես, վոր յես չեմ ուղում. ով
ասաց քեզ, — նորից հարց տվեց հայրը:

— Ով ասաց... սև տախտակը, — վրա բերեց
Կոստին, առանց աչքերու բարձրացնելու:
— Ի՞նչ տախտակ:

— Մենք այսոր ձեր գործարանումն ելինք և
յես կարդացի քո ազգը սև տախտակին:

Հայրը նոր միայն գլխի բնկավ, թե ինչումն
ե բանը: Նա մի քիչ շփոթվեց, այլայլվեց դասը
չուներած աշակերտի նման, չիմացավ ինչ պա-
տասխանի: Ստեփանին մի ըոսկե թվաց, թե Կոս-
տին իր հայրն եւ և ինքը հաշվետու յե հոր ա-
ռաջ իր վարք ու բարքի համար: Նա զգաց, վոր
Կոստին հոգու խորքում ինչ-վոր անհանգստու-
թյուն ե առաջ յեկել:

— Կոստի ջան, յերկու որ անց՝ դու նորից
պիտի գաս գործարան, — շտապեց հայտնել հայրը:

— Հայրիկ, ձեր գործարանը յես այլս չեմ
դա, — հայտարարեց Կոստին վրդովված:

— Թւրեմն դու չես ուղղում ինձ կարմիր տախ-
տակին տեսնել:

Կոստին աշխիները հետաքրքրությունից մե-
ծացան:

— Ինչպես, — վրա բերեց նա:

— Հենց այնպես, — հանգստացնող տոնով պա-
տասխանեց հայրը, — սև տախտակը յես վաղուց
եյի մոռացել. այժմ իմ նվիրված աշխատանքով
ապացուցել եմ, վոր յես ել կարող եմ կարմիր

տախտակի վրա լինել: Իմ մեքենայի ցուցանիշ-
ներն այժմ յետ չեն մնում լավագույն ընկերնե-
րիս ցուցանիշներից:

Կոստին մարմնով մի ախորժ ջերմություն
անցավ, ուրախությունից մոտ վաղեց հորն ու
ճակատից մի գուրեկան համբույր քաղեց:

Գիշերը, յերբ մայրը լույսը հանգըրեց ու
պառկեց քնելու, Կոստին արդեն յերազի մեջ
պատկերացրեց կարմիր տախտակը՝ իր հոր ազ-
գանունը վրան գրված:

Նա քնած եր, բայց դեմքին մի ժպիտ դեռ
ելի փայլում եր:



025
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հունձը	3
2. Թեվը	10
3. Ընկերը	20
4. Փոքրիկ Ռուգոլիքը	28
5. Փոքրիկ բարեկամները	37
6. Կոստին	43

ՀՀ Ազգային գրադարան



NL0362896

55121

ԳԻՆԸ 60 Վ.



В. СИМОНЯН

ЖАТВА

РАССКАЗЫ

(На армянск. яз.)

С А Х Е Л Г А М И
Тифлис

1936